

մեր, Դու վախճան գաղափարաց համայն հաւատարիմ հօտիդ:

Ներսիսյէր, Աստուածարեալ Հովուապետ, արկանել առ ոստ Սրբոյ Հօրդ զհաւաստիս որդիական խոնարհ զգացմանց մերոց և զճշմարիտ ցնծութիւն ընդ ողջամբ դարձ Բո, և օրհնութիւնս բոլորել Ամենակարողին, զի շնորհեսցէ Բեզ, յոգնալատակ Բահանյապետիդ, աւուրս երկայնս, անդորրս և արդիւնաւէտս ի պայծառութիւն ուղղափառ եկեղեցւոյ և ի շինութիւն Հայրենեաց:

Ապա երգեցողիկ խումբը երգեց «Ով Տէր Աստուած, լուր՝ մեր բարբառ» երգն և համբուրելով Նորին Վեհափառութեան աջն ամենեքեան դուրս եկան: Նոյն օր բազմ ունեցան ներկայանալու Նորին Օծութեան և նորա օրհնութիւնը ստանալու թէ գիւղի եկեղեցականք թէ Սինօզի պաշտօնեայք, և թէ Վաղարշապատի այլ պաշտօնեայք ու պատուաւոր քաղաքացիք:

Իսկ ամսոյս 7 ին պաշտօնապէս ներկայացաւ Նորին Օծութեան Էջմիածնայ գաւառապետ Պ. Գ. Խանաղեանցն, որ զինուորագրութեան պատճառով բացակայ էր Վաղարշապատից Նորին Օծութեան գալստեան օրը:

Նոյն օրը Նորին Օծութիւնն, ուղեկցութեամբ սինօզականների, դուրս եկաւ վեհարանից, շրջեց ամենուրեք, տնտղելու Վանքի նորոգութիւնքն և Տպարանի շինութիւնն և արաւ կարեւոր նկատողութիւնք, շնորհակալութիւն յայտնելով Ս. Ներսէս և Սարգիս Եպիսկոպոսներին, որոնք հսկել էին նորոգութեանց և շինութեանց:

Ամսոյս 13 ին կիրակի Ս. Աթոռում կատարուեցաւ Հայրապետի չորրորդ տարեգարձի տօնը հանգիսաւոր կերպով: Նախընթաց շաբաթ երեկոյեան բոլոր միաբանութիւնը շուրջառնելով, խաչուխաչվառով, խնկարկութեամբ և երգեցիկ խումբն էլ շարական երգելով առաջնորդեց Նորին Օծութեան Վեհարանից Ս. Եկեղեցին, որ մոմերի և կանթեղների լուսով փայլում էր: Երեկոյեան ժամերգութիւնից յետ, հսկումն եղաւ: Երեկոյեան Ս. Աթոռի բակում ճրագաւոյց էր. աչքի ընկնում էր գեղեցիկ վեճեղն, որ զանգակատան արեւմտեան կողմում դրած էր: Խուռն բազմութիւն ժողովրդեան շրջում էր, զուարճանալով գեղեցիկ ճրագաւոյցով:

Կիրակի առաւօտեան Նորին Օծութեան շնորհաւորութեան



Համար ներկայացան միաբանութիւնն, ապա ճեմարանի տեսուչ, ուսուցիչք և աշակերտք ներկայացան և մաղթանք կոտարուեցաւ վեհարանի գահլիճում, թէ մաղթանքի ընթերցումն և թէ երգեցողութիւնը շատ գեղեցիկ էր և սրտառուչ: Նորին Օծութիւնն ըստ սովորութեան ազգու խօսքերով խրատեց և օրհնեց ամեն ներկայ եղողներին և բոլոր Հայ ազգն ու պահպանիչով վերջ դրեց Հանդէսին: Մաղթանք կարգացող աշակերտին վարձատրեց արծաթեայ ժամացուցով:

Ապա սկսան գալ ի շնորհաւորութիւն գիւղի գալրոցների աշակերտք և աշակերտուհիք իրանց ուսուցիչներով ու վարժուհիներով և ամենայն կարգի ժողովրդականք, սկսած պ. գաւառապետից ու պաշտօնեաներից մինչև վերջին ցանկացող քաղաքացին: Ամենքն էլ արժանացան Նորին Օծութեան օրհնութեան:

10<sup>1</sup>/<sub>2</sub> ժամին Նորին Օծութիւնն հանդիսաւոր կերպով իջաւ եկեղեցին Ս. պատարագին ներկայ լինելու համար. պատարագիչ էր ս. Երեմիա Եպիսկոպոսը: Եկեղեցում երգեցողութիւնն յոյժ ներդաշնակ էր և վսեմ: Պատարագից յետ Նորին Օծութիւնը շարունակեց ընդունելութիւնը մինչև մի ժամն զինի կեսաւուր, երբ զանգը հրաւիրեց բոլոր շնորհաւորողներին ի ճաշկերպթ հասարակաց սեղանատանը: Մի քանի հարիւր հոգիք տեղաւորուած էին երկու սեղանատան մէջ: Պատարագիչ ս. Երեմիա եպիսկոպոսն համառօտ և պատշաճաւոր խօսքերով ցոյց տուեց օրուայ նշանակութիւնը Հայ ազգի համար, սորա անցեալն ու ներկայն և առաջարկեց բաժակներ Նորին Կայսերական Մեծութեան: Վեհափառ Հայրապետի, Հայոց աղգի պայծառութեան և Ս. Աթոռի ու միաբանութեան հաստատութեան համար, որոնք ընդունվեցան կեցցէներով և յարմարաւոր երգերով, որոնք երգեց ճեմարանի երգեցիկ խումբն, ճայնակցութեամբ միաբանից և ժողովրդականաց: Երեկոյեան Մայր եկեղեցին և նորա բակը գեղեցիկ կերպով լուսաւորած էր գոյնզգոյն ապակեայ և թղթեայ լուստերներով, աւելի գեղեցիկ տեղարան էր ներկայացնում լուսաւորված և վեհելով զարգարուած զանգակատունը: Ճրագալոյցի կարգադրող և վենկելի նկարիչն էր պ. Մակար Տէր Սարգսեանց, որ միւս օրը վարձատրուեցաւ Նորին Օծութիւնից ստանալով մի ոսկեջրած արծաթեայ մեծ ջրաբաժակ իւր խնով:



Վերջապէս Կ. Պօլսի ազգային ժողովը, կատարեց նոր պատրիարքի ընտրութիւնը: Ընտրվեցաւ ուղղափառ մեծամանուկ-թեամբ ձայների Արմաշու վանուց վանահայր Գեորգի Խորէն եպիսկոպոս Աշքեանը, որ իւր բնական հանճարով ու ձիրքերով, հեռու կուսակցական ոգուց, վանքի մէջ իւր կեանքի մեծ մասը անցուցած, ուսման և կրթութեան նուիրուած եկեղեցական գոյով, ոգևորված պարտաճանաչութեամբ դէպի Ս. Եկեղեցին և ազգն ու օրինապահութիւնն, անշուշտ կարող պիտի լինի ներկայի ծանր հանգամանաց դիմանալ, և աջակցութեամբ թէ եկեղեցական դասի և թէ ոյժ և իշխանութիւն ունեցող աշխարհականաց, եկեղեցական և ազգային գործերը կարգի դրնել: Եկեղեցին և ազգն պահպանել արաւոքին և ներքին թշնամիներէն, ու տէրութեան վստահութիւնը վայելել:

Վեհափառ Սուլթանի հաստատութեան հրովարտակը ստացուելից յետ, անցեալ հոկտեմբերի 17 ին հանդիսաւոր կերպով նորին Գերնապատուութիւն նորընտիր Պատրիարքը մուտ գործեց Կ. Պօլիս, ուր փառաւոր ընդունելութիւն եղաւ: 19 ին նոյն ամսոյ ազգային ժողովի մէջ իւր երդումն կատարելից յետ ազգային Սահմանադրութեան անխախտ պահպանման և նորահրահանգների համեմատ իւր իւր իշխանութիւնը վարելու մասին, իբրեւ պատասխան շատ ճառախօսութեանց զանազան վարչական մարմինների ատենապետաց և իբրեւ ծրագիր իւր ապագայ գործունէութեան նորընտիր Սրբազան Պատրիարքն հետեւեալն ասաց.

«Այսօր առաջին անգամ կը ներկայանամ Ազգային ժողովոյդ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան կողմէն լինելով ձեր ընտրութեամբն և Վեհափառ Պայտեր վաւերացմամբ: Պատրիարքական պաշտօնն ստանձնելով, այսուհետեւ պատասխանատու եմ ի դիմաց Ազգին՝ առ Վեհափառ Սուլթանն՝ հաստատուն պահելու համար այն հաւատարմութիւնը զոր հայ ազգը դարերէ ի վեր ունեցած է առ քահն Օսմանեան, և առ Ազգն պատասխանատու եմ ն. Կ. Վեհափառութեան վստահութիւնն անխախտ պահելու համար:

«Կը յուսամ որ ներողամիտ պիտի գտնուիք ինձ, վասն զի յեղակարծ այս պաշտօնին կողմելովս, ամեն բան նոր է ինձ համար: Ես կուգամ այնպիսի նշանաւոր պատրիարքներէ յետոյ, որք այնքան արժանաւոր յիշատակներ թողած են Ազգին, և վերջին անգամ Ամեն. Տ. Յարութիւն Սըրբազանէն յետոյ, որ աստ ներկայ է, և որոյ պատրիարքութեան օրով Տէ-



րութեան և Ազգին յարաբերութիւններն առաւել բարւոք կացութեան մը մէջ մտան։ Աստուած երկար կեանք տալ իմ կենդանի նախորդաց և նրն-  
ջեցելոց հոգւոյն հանգիստ պարգևէ։ (Բոլոր ժողովրդականք և ժողովուր-  
դն սրտագին «ամէն» գոչեցին)։ Թէ պատրիարքական ծանր պաշտօնին  
մէջ պիտի կարենամ գոհացունել զձեզ։ Ցեալք Երեսփոխանք, այս բան  
ձեզմէ կախում ունի։ Աշխարհային կեանքէ միշտ հեռու, վանական կրթ-  
թութեամբ ու վանական կեանքով ապրած, միշտ անձա նուիրած հաւատոյ,  
գիտութեան և եկեղեցւոյ պաշտաման, երբէք ձգտումներ չեմ ունեցած  
իմ համեստ կացութենէս դուրս ուրիշ բարձր պաշտօններու։ Ուստի, բնա-  
կանաբար, այսօր սրտիս մէջ մեծ յուզում մը և ոչ նուազ սրտադող մը կը  
զգամ։ Կը զգամ և գիտեմ թէ համարապարտ եմ առաջի Աստուծոյ, մեր  
սուրբ Եկեղեցւոյ հաստատուն պահպանման համար, համարապարտ եմ ա-  
ռաջի մեր Օգոստոսիան Կայսեր՝ թէ ժողովուրդն որոյ հոգաբարձութիւնն  
ինձ յանձնուած է, անխախտ կը յարատեւէ իւր հաւատարմութեան մէջ, և  
համարապարտ եմ ամենայն Հայոց Հայրապետին՝ որուն հոգեւոր իշխանու-  
թիւնը կը տարածուի ամենուրեք ուր որ հայ կայ, իբր փոխանորդ մեր սրբ-  
բազնասուրբ հայրապետին, պարտաւոր եմ իմ հոգեւոր հսկողութեան  
յանձնված հոգեւոր պաշտօնին համարը տալ, ցոյց տալ թէ Եկեղեցին  
հաստատուն է, թէ բարեպաշտութիւն և կրօնական զգացմունք կաճին կը  
զարգանան, թէ հովիւները կը խնամեն իրենց Յօռը այս ամենուն պատաս-  
խանը տալու պարտաւոր եմ, որպէս նա ևս պարտաւոր է համար տալ Ցեա-  
սըն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

« Բանի որ այսպէս ծանր է իմ պաշտօնս, պիտի կարենամ լիովին կատա-  
րել զայն։ Երբ ընտրողը և ընտրեալ կը հաւատան թէ Աստուծոյ մատը կայ  
ընտրութեան մէջ, պէտք չէ կարողութիւն փնտռել, վասն զի Աստուած  
տկարները, անզօրները կը կոչէ ի պաշտօն, և ոչ թէ զօրաւորները, և այդ  
տկարներուն վրայ ցոյց կուտայ իւր մեծութիւնը։ Սակայն այս պատրիար-  
քական պաշտօնն հոգեւորական լինելէ զատ, քաղաքական հանգամանք մը  
ալ ունի։ Վանական մը որ միայն հոգեւոր գործերով զբաղած է, պիտի գիտ-  
նայ պատասխանել նաև քաղաքական պահանջմանց, Երկու տեսակ ծառա-  
յութիւն կայ, Եկեղեցւոյ ծառայութիւն և Պետութեան ծառայութիւն։  
Նա որ կարող է Եկեղեցւոյ գործոց մէջ, կարող է նաև Պետութեան գոր-  
ծոց մէջ, վասն զի երբ լաւ կը ճանաչէ եկեղեցւոյն իրաւունքները և գիտէ  
թէ ո՞րք են անոնք, այնպիսին կը ճանաչէ նաև ինչ որ քաղաքայնոյն իրա-  
ւունքն է։ Եւ այս՝ կը հետևի Քրիստոսի պատուիրանէն, որ ըսած է « Տո՛ւք  
զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ »։ Ինչ համար բարեբաղդու-  
թիւն մ' է որ Պետութեան ծառայելն գիւրին է այժմ, վասն զի ունինք  
իմաստուն, հպատակասէր և արդարամիտ կայսր մը որ իւր հայրական հո-  
վանւոյն նիւթը կը պահէ կը պահպանէ իւր բոլոր հպատակները և կը  
պաշտպանէ Եկեղեցիները, որ գիտէ թէ այն առանձնաշնորհումներն որք  
պարգևուած են մեզ, ինչպէս նաև ամեն քրիստոնեայ ազգերուն, փոխարի-



նութիւն մ են մեր հաւատարիմ ծառայութեանց, և թէ Եկեղեցին չէ կարող ապրիլ առանց այդ առանձնաշնորհմանց որք միանգամայն իւր կացութեան բնական պահանջմունքն են ։ »

« Մեծ գօտարութիւնը մեր ներքին վիճակին մէջ է, Պաշտօնի գլուխ անցնելու պահուս, կը տեսնեմ թէ մեր եկեղեցական կաղմակիրպութեան վիճակը գոհացուցիչ լինելէ շատ հեռի է, յիսուն վաթսուն թեմեր անհովիւ, անխնամ թողուած են, այլ ևս չէ մնացած այն կապակցութիւնը որ պէտք է մնայ կեդրոնին, թեմերուն և վանօրէից միջև, ամեն ինչ խզուած, քայքայուած է, Երկրորդ՝ մեզմէ հերձուածներ՝ որք կրթական քողին տակ դպրոցներ բացած են ի գաւառս, ևս առաւել կը ծանրացունեն մեր վիճակը, վասն զի երբ կրթութիւնը ծաւալելու ջանքեր կը կեդծեն, Եկեղեցին է որ կը սուգէ, Հաստատուն վիճակներ հիմնենք գաւառներուն համար՝ ուր ոչ հովիւ կայ և ոչ այցելու, և մեր թշնամիք օգուտ կը քաղեն այս վիճակէն, անհովիւ, անգլուխ մնացած են թեմերն, Երբ տասն ոչխար կարելի չէ առանց հովիւ թողուլ, ո՛ւր մնաց հազարաւոր ժողովուրդներ ։

« Այս գօտարութեանց մէջ տուիք ինձ Սահմանադրութիւն մը որուն վրայ կատարեցի իմ ուխտս, Սակայն գիտէք, Ցեարք, թէ այս Սահմանադրութիւնը վերաբննելու հարկը տասն և եօթ ասորի առաջ զգացուած լինելով, այդ մտքը որոշում մը տրուած է, ուստի բնականաբար իմ Ուխտիս մէջ կը մտնէ նաև Սահմանադրութեան բարեփոխման խնդիրը, Բարեփոխութիւն ըսելով, պէտք է ըմբռնենք ձեռն մէջ կատարելիք փոփոխութիւնները, Սահմանադրութեան հիմերը նշոյն և անխախտ պահելով ։

« Բոլոր այս աշխատութիւններն ի կատար հանելու համար պէտք չէ բռնաւ վհատիլ, Երկինքը Աստուած մը ունինք որ այս Եկեղեցին փրկեր է ամեն փոթորիկներէ, այլ որ անպատիժ չը թողուր նաև մեր անհոգութիւնն, Երկրի վրայ ունինք Թագաւոր մը որ գեր ի վեր է իւր իմաստութեամբ իւր արդարասիրտութեամբ և իւր կորովամտութեամբ, որ մեծ քաղաքագէտ մը, բարեգործ մը, և որ իւր իմաստուն քաղաքագիտութեամբը գիտէ իւր հպատակներն իրենց հպատակութեան հաւատարիմ սահմանին մէջ պահպանելու պայմանները, ունինք պատկառելի Երեսփոխանութիւն մը որ մեծ հոգածութեամբ կը հսկէ աղքային ներքին գործոց վրայ և մեծ խնամով կը քննէ իւր որոշման յանձնուած խնդիրները, ունինք կղերական դաս մը որ անձնազոհութեան այնքան ապացոյցներ տուած է և որ, ինչ ալ ըսուի, միշտ սիրտյօժար է ամեն պաշտօն և աշխատութիւն ստանձնելու, և ուղղութեան ու բարեկարգութեան ճամբէն չը շեղիր բնաւ, այլ որ կենդրոնին հաստատուն անօրէնութեանց կը կարօտի ։

« Աստահ եմ որ դուք ամենեղ, երեսփոխանք և ժողովուրդ, չը պիտի զլանաք աջակից գտնուել ինձ իմ պարտուցս և աշխատութեանց կատարման համար, որպէս զի կարենամ ըսել Քրիստոսի հետ « Ահա ես և մանկուիք իմ ։

« Մաղթենք որ բարձրեալն Աստուած երկար կեանք և բարօրութիւն պար-



գեւէ մեր Օգոստոսիառ Աւհայեանին Սուլթան Ապտ իւլ Համիտ Բ. կայսեր  
 և զօրավիգ լինի Ն. Կ. Աւհայեառութեան ամեն գործոց, և անասան պա-  
 Տէ նորա մեծապանծ Գահն: »

Մամուլը մեծ դժ է և նորա նաատակն է ծառայել ժողովրդոց զարգաց-  
 ման, ուղղել և շինել նոցա մտքերն յօգուտ պոնպիսի հաստատութեանց,  
 որոնք գոյութիւն ունին նոցա շահերի համար, նպաստում են նոցա պահպա-  
 նութեան, նոցա բարոյական շինութեան: Բայց դժբաղդաբար այդ ուժի  
 ներկայացուցիչք (առաւելապէս մեր մէջ) յաճախ ընկնում են ակամայ սխա-  
 լանաց մէջ և նպաստում են այն գաղափարի կամ հաստատութեան վնա-  
 սելուն, որոց պաշտպանութիւնն իրանց երդուեալ ուխտն են համարած: Մեր  
 խմբագրութիւնքն այդ ակամայ սխալանաց մէջ գցողներն և նրանց բարոյա-  
 պէս տուժել տուողներն այն թղթակիցներն են, որոնք ղեկավարվում են  
 անձնական հաշիւներից կամ կրքերից:

Այսպէս յաճախ կարդում ենք մեր Ռուսահայ մամուլի մէջ պոնպիսի  
 գրուածքներ և թղթակցութիւնք, որոնք վնասում են Ցաճկահայոց վարչա-  
 կան մարմիններին կամ հաստատութեանց, փոխանակ նոցա զարգացման և  
 օգտաւէտ դիրք ստանալուն նպաստելու: Նոյն երևոյթը տեսնում ենք և  
 Ցաճկահայ մամուլում փրաբերութեամբ Ռուսահայոց հոգեւոր վարչական  
 մարմիններին և հաստատութեանց, Ամենօրեայ երեւոյթ է այս մեր մամու-  
 լում, Յայտնի է, որ կուսակցութեանց պատկանող, կրքոտ և շահախնդիր  
 անձինք ամեն միջոց իբրև զէնք գործ դնել չեն զլանում, իրանց մասնաւոր  
 նպատակին հասնելու համար: Նոքա ամեն ըրպէ պատրաստ են, օգուտ քա-  
 ղելով բազմութեան միամտութիւնից, գործին տեղեակ չլինելուց կամ ան-  
 տարբերութիւնից, յանուն ընդհանրութեան միջոցները խմբագրութիւնք և  
 հեռաւոր հասարակութիւնք:

Այսպիսի մի դէպք աչքերիս տակ ընկաւ Կ. Պոլսի մի նշանաւոր և ազ-  
 դեցիկ լրագրի մէջ, ուր անհաւատարիմ թղթակցի շնորհիւ ապիկարու ան-  
 կարող, անհնազանդ, վարչական կշիռ չյարգող, բարձրագոյն իշխանու-  
 թեան կարգագրութիւնք չկատարող, մեծաւորի պատիւ և յարգ չպահող,  
 վարչական ընդունակութիւնից զուրկ, բայց մեծամիտ և ինքնահաւան, եկե-  
 ղեցական կարգ ու կանոնի անհմուտ, երկու խօսք խօսելու շնորհք չունե-  
 ցող եկեղեցականն հանդէս է բերած իբրև զոճ հոգեւոր բարձրագոյն իշ-  
 խանութեան կամայականութեան և անձնական հաշիւների, իշխանութեան  
 որ երկար տարիներ աւելի քան հայրական խնամք, զիջողութիւն և ներո-  
 ղամտութիւն գործ դրած է այդպիսեաց յուղղութիւն վերածելու համար:  
 Բայց այդ հայրական խնամքն ու գութը—ոչ միայն չեն գնահատուած և  
 նոքա ոչ միայն չեն տարած նրանց յուղղութիւն՝ այլ առիթ են տուած նե-  
 րողամտութիւն թուլութիւն համարելով, մեծամտելու և ի վնաս հասարա-  
 կական շահերի վարուելու, աշխատելով միամիտ ժողովուրդը վրդովել: